

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #10

Հոկտեմբեր 2017

Երևան, Հայաստան



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	9
R&D	12
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	13
Կոսմետիկա	16
Դեղագործություն	17
Այլ ոլորտներ	19
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	21
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	23
Տեղական նորություններ և միջոցառումներ	24

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մենդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական ընկերությունն առաջարկում է առևտրային հարթակ սննդամթերքի ոլորտում գործող ընկերություններին, որոնք հետաքրքրված են սննդի հումքի նոր մատակարարների որոնմամբ

Լեհական ՓՄՁ-ն առաջարկում է առցանց առևտրային հարթակ, որը հնարավորություն է տալիս ընկերություններին բարելավել իրենց արտադրական արդյունավետությունը և պատվերների քանակը՝ համապատասխան գործընկեր փնտրելով: Ընկերությունը սննդամթերք մատակարարողներին առաջարկում է ծառայությունների մատուցման պայմանագիր:

Ծածկագիր. BOPL20170921001

Մեծ Բրիտանիայում գտնվող արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ

Մեծ Բրիտանիայում գտնվող փոքր ընկերությունը, որն արտադրում է 12 ամսեկանից մինչև 8 տարեկան երեխաների համար նախատեսված առողջ սնունդ, փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ իր առողջ, նպատակահարմար և օրգանիկ սերտիֆիկացված սննդի միջազգային վաճառքն ավելացնելու համար:

Ծածկագիր. BOUK20160331003

Հունգարական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Հունգարական ընկերությունը, որն արտադրում է կապույտ (կարմիր) խաղողի սերմերից միկրո-փոշի և կապույտ (կարմիր) խաղողի սերմերից յուղ, ցանկանում է համագործակցել օտարերկրյա առողջ սնունդ վաճառող խանութների, մեծածախ առևտրով զբաղվողների, մթերային խանութների, սուպեր և հիպեր մարկետների, դեղագործական կամ առցանց հարթակում գտնվող մթերային խանութների հետ, ովքեր իրենց երկրում կտարածեն արտադրանքը:

Ծածկագիր. BOHU20160201001

Բտալական ընկերությունն առաջարկում է խորհրդատվական և փորձարկման ծառայություններ

Բտալական ընկերությունը մասնագիտացած է սննդի հետ շփման նյութերի ոլորտում և առաջարկում է փորձարկման և վերլուծական վերահսկման <<խնդրի լուծում>> ծառայություններ, փաթեթավորված սննդամթերքի անվտանգության հետաքննություն, տեխնիկական և գիտական աջակցություն, ինչպես նաև օրենսդրական աջակցության տրամադրում ԵՄ և FDA (սննդամթերքի և դեղերի վարչություն) օրենսդրությունների վերաբերյալ: Ընկերությունը կարող է աջակցել նաև հետազոտական և մշակման (R&D) աշխատանքներ իրականացնող նորարարական ոլորտի սննդի հետ շփման նյութերի ոլորտի հաճախորդներին: Նրանք ցանկանում են կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր:

Ծածկագիր. BOIT20160408003

Գործարար համագործակցության հարցումներ

Բելգիական ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները որպես գործակալ

Բելգիական ընկերությունը հանդիսանում է միջազգային առևտրային կազմակերպություն, որը մասնագիտացած է սննդամթերքի արտադրության մեջ: Նրա առաքելությունն է իրար կապել ապրանքների պրոֆեսիոնալ գնորդներին և վաճառողներին, որպեսզի նրանք կարողանան միջազգայնորեն իրականացնել շահավետ և կայուն բիզնես: Ընկերությունը սննդի արդյունաբերության ոլորտի մասնագետ է հանդիսանում՝ մասնավորապես համաշխարհային սննդի ոլորտում: Այն ունի նաև գրասենյակներ Ֆրանսիայում:

Ծածկագիր. BRBE20170630001

Ռուսական դիստրիբյուտորը փնտրում է մատակարարներ

Ռուսական ընկերությունը, որը զբաղվում է պարենային ապրանքների տարածմամբ (հիմնականում հրուշակեղեն և մթերք), փնտրում է սննդամթերք արտադրողներ տարածման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BRRU20160126001

Հունգարական ընկերությունը փնտրում է մատակարարներ

Հունգարական ընկերությունը, որը մասնագիտացած է սննդամթերքի առևտրով, փնտրում է պահանջարկով արքայախնձոր և վակուում փաթեթավորմամբ պանրի մատակարարներ: Ընկերությունն առաջարկում է հանդես գալ որպես դիստրիբյուտոր:

Ծածկագիր. BRHU20161129001

Լեհական ընկերությունը փնտրում է նոր մատակարարներ

Լեհական ընկերությունը որը զբաղվում է բազմատեսակ բարձրորակ առողջարար սննդի՝ դեղաբույսեր, համեմունքներ, չրեր, փռչիներ, յուղեր և շատ ավելի, մեծածախ առևտրով և հանդիսանում է վերավաճառող, փնտրում է ընկերություններ, որոնք կմատակարարեն նշված ապրանքներից: Ընկերությունը ցանկանում է իր պորտֆոլիոյում ավելացնել յուրահատուկ ապրանքատեսակներ և դրանք վաճառել սեփական ապրանքանիշի ներքո: Ակնկալվում է համագործակցել տարածման ծառայությունների մատուցման շրջանակում:

Ծածկագիր. BRPL20170626001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Բելգիական առաջատար ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ

Բելգիական ընկերությունը, որն արտադրում է բազմազան գլխարկներ և արքեսուարներ (ձեռնոցներ, շարՖեր) փնտրում է տեքստիլի, նորաձևության և/կամ արքեսուարների ոլորտի մեծածախ առևտուր իրականացնողների կամ դիստրիբյուտորների, իր ապրանքը տարածման ծառայությունների միջոցով տարածելու նպատակով:

Ծածկագիր. BOBE20170131002

Բրիտանական ընկերությունը իր եգիպտական դուստր ընկերության հետ համատեղ առաջարկում է ենթակապալառուի ծառայություններ

Բրիտանական ընկերությունը և իր եգիպտական դուստր ընկերությունը, որ ունեն ավելի քան 16 տարվա փորձ հագուստի շուկայում, առաջարկում են ենթակապալառուի ծառայություններ: Ընկերության գործունեության ոլորտը ներառում է երեխաների համար նախատեսված հագուստի արտադրություն, ինչպես նաև ընկերությունը կարող է հանդես գալ այլ տեսակի պատվերներով՝ սպորտային հագուստ, ծածկոցներ և անկողնու սպիտակեղեն:

Ծածկագիր. BOUK20160824001

Խորվաթական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առաջարկում է ենթակապալառուի ծառայություններ

Առաջատար խորվաթական ընկերությունը տեքստիլի ոլորտից, որը մասնագիտացած է տղամարդկանց և կանանց հագուստի արտադրության մեջ, փնտրում է դիստրիբյուտորների և գործընկերների, ովքեր կցանկանան հանդես գալ որպես կապող օղակ իրենց ապրանքի գնորդների միջև: Ընկերությունն առաջարկում է նաև ենթակապալառուի ծառայություններ՝ այլ ընկերությունների համար կատարելով կարի աշխատանքներ:

Ծածկագիր. BOHR20160721001

Չեխական ընկերությունն առաջարկում է մատուցել ենթակապալառուի ծառայություններ

Չեխական ընկերությունը, որն առաջարկում է մեքենայական ասեղնագործություն, փորագրող և լազերային տեխնոլոգիա տեքստիլի և այլ գովազդային տեքստերի ու նյութերի վրա, առաջարկում է իր ծառայություններն ու արտադրանքը որպես ենթակապալառու: Ընկերությունը շուկայում է արդեն 20 տարի և առաջարկում է արագ, վստահելի և մատչելի գներով ծառայություններ և արտադրանք:

Ծածկագիր. BOCZ20160915001

Իսպանական ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական համաձայնագրի և ենթակապալառուի ծառայությունների շրջանակում

Իսպանական ընկերությունն արտադրում է սինթետիկ կաշի, հիմնականում պաստառագործության, կոշիկեղենի և հագուստի համար: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և ենթակապալառուներ, որոնք ներգրավված են կոշիկի, տեքստիլի, ավտոմոբիլային ու ջրային ոլորտներում:

Ծածկագիր. BOES20170718004

Իսպանական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ կամ գործակալներ

Իսպանական ընկերությունը, որն արտադրում է երեխաների համար նախատեսված հագուստ և ունի ավելի քան 30 տարվա փորձ, ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորների կամ գործակալների հետ:

Ծածկագիր. BOES20170531001

Գործարար համագործակցության հարցումներ

Ֆրանսիական ընկերությունը փնտրում է արտադրողներ

Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է հյուրանոցների և զբոսաշրջային ոլորտի համար նախատեսված պատվերով արտադրանքի պատրաստման և տարածման գործում, մասնավորապես ուղղված երեխաների և ընտանեկան շուկայի ոլորտին, փնտրում է արտադրող, որը կարող է պատրաստել փափուկ խաղալիքներ՝ փոքրիկ կտորե հագուստներով, որի վրա կարող է նաև տպագրվել համապատասխան տպագրություն:

Ծածկագիր. BRF20150427001

Ռուսական ընկերությունը փնտրում է արտադրողներ

Ռուսական ընկերությունը (Կուրսկի շրջանից) արտադրում է երեխաների համար նախատեսված հագուստ: Ընկերությունը փնտրում է հիպոալերգեն գործվածքներ արտադրողներ՝ արտադրական պայմանագրեր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BRRU20160816002

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական շինարարական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և ենթակապալառուներ արտասահմանում

Լեհական ընկերությունը մասնագիտացած է անհատական, էքսկլյուզիվ տների շինարարական և կառուցապատման աշխատանքների մեջ և ցանկանում է համագործակցել արտադրական և ենթակապալառուի համաձայնագրերի շրջանակներում:

Ծածկագիր. BOPL20170920001

Լեհական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Շինարարության և ճարտարապետության ոլորտում գործող լեհական մասնագիտացած ընկերությունը փնտրում է գործընկերներ եվրոպայում և դրա սահմաններից դուրս, որոնք շահագրգռված կլինեն ծառայությունների մատուցման պայմանագրերով և ենթակապալառուի պայմանագրով: Ընկերությունը մասնագիտացած է ճարտարապետական դիզայնով, կայուն ճարտարապետության (կանաչ շենքեր) ոլորտում, ինչպես նաև սրամադրում է համապարփակ ծառայություններ շինարարական ոլորտում:

Ծածկագիր. BOPL20170614001

Սլովակիայում գտնվող ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ

Սլովակիայի ընկերությունը, որը մասնագիտացած է բնական գեոլիտի հանքարդյունաբերության և վերամշակման ոլորտում, արտադրում է շինարարական ոլորտին ուղղված բնական գեոլիտ: Ընկերությունն առաջարկում է ապրանքներ, որոնք օգտագործվում են որպես կայունացուցիչներ կոնստրուկցիայի և տարբեր այլ շինարարական խառնուրդների (սվաղներ և սոսինձներ), ցեմենտի ինչպես նաև որպես կորոզիայի կանխարգելիչ ուղղակիորեն խառնված խառնուրդների արտադրության մեջ:

Ծածկագիր. BOSK20160420003

Ռուսական ընկերությունը փնտրում է աութօրսինգային ծառայություններ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է հմուտ շինարարական անձնակազմի և ինժեներների հավաքագրման ոլորտում, ցանկանում է համագործակցել աութօրսինգային պայմանագրի շրջանակում: Աշխատողները փորձ ունեն գործարանում, ջերմային էլեկտրակայանի շենքերում և քաղաքացիական շինարարությունում աշխատելու գործում:

Ծածկագիր. [BORU20160905004](#)

Ռուսական ընկերությունը ցանկանում է համագործակցել ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է դիզայնի, ճարտարապետության և շինարարության ոլորտում տրամադրում է ամբողջական ծառայություններ օտարերկրյա անշարժ գույքի ոլորտի ներդրողներին, ովքեր հետաքրքրված են ռուսկան անշարժ գույքի շուկայով: Ընկերությունը մեծ փորձ ունի առևտրի և բնակելի նախագծերի վերակառուցման ու շինարարության մեջ՝ ներառելով նաև պատմական շենքերի վերակառուցման պահանջները: Ակնկալվում է ծառայությունների մատուցման պայմանագիր կնքել:

Ծածկագիր. [BORU20170719003](#)

Չեխական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Չեխական ընկերությունը ակտիվ է եռակցման և մետաղամշակման ոլորտում և գործում է շուկայում 1993թ.-ից: Ընկերության արտադրական ծրագրի մի մասը նաև հրդեհային տեղերի և տանիքների արտադրության համար նախատեսված օդի խցիկների մատակարարումն է, ինչպիսիք են մետաղական փակագծերը, այլումինե տանիքները, վանդակաճաղերը, սալիկների կցամասերը, անվտանգության աստիճանները, պարիսպները և այլն: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորների հետ այս տեսականու տարածման համար:

Ծածկագիր. [BOCZ20160427002](#)

Գործարար համագործակցության հարցումներ

Բրիտանական առևտրային գործակալը առաջարկում է ներկայացուցչական ծառայություններ

Մեծ Բրիտանիայում գործող շինարարական ոլորտի գործակալը փնտրում է պողպատե և ալյումինե շինանյութեր արտադրողներ և առաջարկում է նրանց ներկայացուցչություն Մեծ Բրիտանիայում:

Ծածկագիր. BRUK20160426001

Ռումինական արտադրական ընկերությունը փնտրում է հումքի մատակարարներ

Հղկող մարմինների արտադրության մեջ մասնագիտացած ռումինական ընկերությունը փնտրում է արտադրողների և մատակարարների, որոնք կարող են հումք մատակարարել արտադրական կամ տարածման ծառայությունների մատուցման պայմանագրերի հիման վրա:

Ծածկագիր. BRRO20170927001



Eurostars նախագծի համար անհրաժեշտ է կլինիկական հետազոտությունների ինստիտուտ

Գերմանական ընկերությունը, որը մասնագիտացած է չափման և սենսորային տեխնոլոգիաների ոլորտում, փնտրում է կլինիկական գիտահետազոտական կենտրոն՝ Eurostars նախագծին միանալու համար: Ծրագրի նպատակն է զարգացնել ստանդարտացված մեթոդ (և նախատիպ) ոչ ինվազիվ արյան ճնշման չափման գործիքների համար՝ հիվանդների տվյալների մոնիտորինգը համակարգված և հուսալի դարձնելու նպատակով: Գործընկերը պետք է փորձ ունենա սիրտ-անոթային հիվանդությունների ոլորտում և պատասխանատու լինի կլինիկական պարամետրերի և հիվանդների կարիքների չափորոշիչների մշակման համար:

Ծածկագիր. RDDE20170918001

Eurostars 2 ծրագիր: Անզլերենի բանակցային ուսուցման պլատֆորմի մշակում

Հարավային Կորեայի ՓՄՁ-ն փնտրում է R & D գործընկերներին՝ ծրագրային ապահովման ծրագիր մշակելու համար, որը զբաղվում է անզլերենի ուսուցմամբ և խորհրդատվությամբ: Առաջարկը կներկայացվի Eurostars2 –ի մրցույթով (մինչև մարտի 1, 2018 թ.) և այդ նպատակով որոնվում են գործընկերներ՝ էլեկտրոնային ուսուցման համակարգում աշխատելու, ինչպես նաև բանակցային փաստաթղթերի կառավարման համակարգը մշակելու և ծառայության առևտրայնացման բիզնես մոդել մշակելու համար:

Ծածկագիր. RDKR20170823001

EUROSTARS- որոնվում են դեղագործական ոլորտի ՓՄՁ-ներ, որոնք մասնագիտացած են

ցավերի բուժման համար նորարարական միջոցների մշակմամբ

Բրյուսելի համալսարանի գենետիկայի զարգացման միավորումը փնտրում է համապատասխան ՓՄՁ-ներ մասնագիտացած ցավերի բուժման համար նորարարական միջոցների մշակմամբ Eurostars-ի համատեղ դիմումի համար: Միավորումը փորձում է գնահատել այս բնագավառում իր հետազոտության կիրառական ներուժը: Որպես նախագծի համակարգող, որոնված գործընկերոջ դերը լինելու է դեղամիջոցների հայտնաբերման փորձաքննության ապահովումը, ինչպես նաև արդյունաբերական ուղղորդումը:

Ծածկագիր. RDBE20170918001

EUREKA / Eurostars: գյուղատնտեսական ընկերություն, որն ապահովում է բերքահավաքից հետո ծառայություններ կամ մշակում

Իսպանական ՓՄՁ-ն, որն աշխատում է գյուղատնտեսության ոլորտում, ցանկանում է ընդլայնել իր կողմից վերջերս սանիտարական բանաձևով մշակված շիճուկի գործարկումը մրգերի և բանջարեղենների վրա: Նախորդ հետազոտական արդյունքները լուրջ, հազարի և սպանախի վրա ընթացել են հաջողությամբ: Այս բնական բանաձևը խոչընդոտում է քլորի վրա հիմնված լուծումների օգտագործմանը, որոնք սահմանափակված են ԵՄ կանոնակարգերով: Նախատեսվում է դիմել Eurostars-ի ծրագրին մինչև 2018 մարտ ամիսը:

Ծածկագիր. RDES20170921001

Eurostars2: Դիզելային շարժիչների թրթռման համակարգերի համար կափարիչի և ճկուն միակցման համակարգի մշակում

Կորեական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է կառուցվածքային ինժեներական նախագծում, դիզելային շարժիչների համար նոր դարաշրջանների թրթռման համակարգերի մշակման և կապակցման գործընթացում են գտնվում: Միացնելով թրթռման համակարգի և թափանիվի բաղադրիչները՝ վերջնական արտադրանքը կարող է օգտագործվել ավտոմեքենաների և ծովային շարժիչային համակարգերում: Նրանք փնտրում են եվրոպական գիտահետազոտական և զարգացման ինստիտուտներ, որոնք ներգրավված են մեխանիկական ճարտարագիտության ոլորտում և շահագրգռված կլինեն զարգացնելու վերջնական արտադրանքի շահագործումը հետազոտական համագործակցության համաձայնագրի միջոցով:

Ծածկագիր. RDKR20170801001

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Իտալական ընկերությունն առաջարկում է իր արտադրանքն արտասահմանում առևտրականացման համար:

Իտալական ծրագրային ապահովման ընկերությունը, որն ունի վաճառքի ավտոմատացման համար շարժական լուծումների մշակման 8 տարվա փորձ մշակել է մոդուլային բազմաբնույթ պլատֆորմ -լուծում վաճառքի ցանցերի հետ կապված բոլոր գործընթացների կառավարման համար: Ընկերությունը որոշել է ընդարձակել իր շուկան և ցանակնում է համագործակցել դիստրիբյուտորական կամ առևտրային գործակալի ծառայությունների շրջանակներում:

Ծածկագիր. BOIT20161207003

Գերմանական ծրագրային ապահովման ընկերությունն առաջարկում է SS լուծումներ

Ֆրանկֆուրտում գործող ընկերությունն առաջարկում է գենետիկական ախտորոշիչ լաբորատորիաների ծրագրային ապահովում և ծառայություններ՝ գենետիկ հետազոտության արդյունքների թարգմանությանն աջակցելու համար: Այն փնտրում է տեղական կամ միջազգային մի քանի ընկերություններ, որոնք ցանկանում են գործընկերներ դառնալ տարածման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում: Պոտենցիալ գործընկերները պետք է ներգրավված լինեն լաբորատոր ծրագրային լուծումների ոլորտում:

Ծածկագիր. BODE20170117001

Լեհական SS ընկերությունն առաջարկում է ենթակապալառուի ծառայություններ

Լեհաստանի հյուսիսում գտնվող SS ընկերությունը մշակում է բազմաբնույթ պարզեցված հարթակ բիզնես գործընթացների ավտոմատացման համար: Ընկերությունն առաջարկում է ծառայությունների մատուցման պայմանագիր և ցանկանում է հանդես գալ որպես ենթակապալառու:

Ծածկագիր. BOPL20160913001

Գործարար համագործակցության հարցումներ

Բրիտանական ընկերությունը ցանկանում է կնքել տարածման ծառայությունների մատուցման կամ լիցենզավորման պայմանագրեր

Բրիտանական ընկերությունը մասնագիտացած է նախակրթարանների (5-ից 14 տարեկան երեխաների համար) օնլայն ուսուցման գործիքների մշակման գործում: Ընկերությունը փնտրում է նորարարական օնլայն ուսուցման գործիքներ բրիտանական շուկայում տարածելու նպատակով կամ լիցենզային պայմանագրեր կնքելու միջոցով:

Ծածկագիր. BRUK20161219001



Գործարար համագործակցության առաջարկներ

Մեծ Բրիտանիայում գործող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Մեծ Բրիտանիայի արևելքում գործող ընկերությունը մասնագիտացած է ֆերմեն պարունակող բարձրորակ նորարարական կոսմետիկ միջոցների և օժանդակի վաճառքով: Այն նպատակ ունի ընդլայնել իր գործունեության սահմանները և ցանկանում է համագործակցել կոսմետիկայի և առողջության/գեղեցկության ոլորտում աշխատող դիստրիբյուտորների հետ:

Ծածկագիր. [BOUK20170921002](#)

Լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը, որն արտադրում է նորածին երեխաների, երեխաների և մեծահասակների համար նախատեսված հիպոալերգիկ կոսմետիկայի և լվացող միջոցների 8 տեսակ, փնտրում է դիստրիբյուտորներ, ինչպես նաև ցանկանում է արտադրել առանց ապրանքանիշի պրոդուկտներ օտարերկրյա ընկերությունների համար՝ ենթակապալառուի պայմանագրի շրջանակներում:

Ծածկագիր. [BOPL20170706002](#)

Շվեդական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Շվեդական կոսմետիկ միջոցներ արտադրող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ: Ընկերությունն առաջարկում է դիմահարդարման միջոցների լայն տեսականի մրցունակ գներով և որակով: Ապրանքանիշը վերջերս սկսել է իր գործունեությունը Շվեդիայում և սկանդինավյան երկրներում և պատրաստ է մուտք գործել նոր շուկաներ: Ապրանքանիշը ներկայացնում և վաճառում է կոսմետիկ միջոցները նոր և նորարարական եղանակով: Շնորհիվ արտադրանքի յուրովի ներկայացմանը և մրցունակ գներին՝ ընկերությունը կենտրոնացած է վաճառքի մեծ ծավալների վրա:

Ծածկագիր. [BOSE20170612001](#)

Դեղագործություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Բժշկական սարքավորումներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտոր

Իտալական բժշկական տեխնիկայի արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ իր համակարգում՝ աջակցելու էնդոսկոպների ձեռքի լվացման, էնդոսկոպիայի մաքրման ինչպես նաև ճկուն ու կոշտ էնդոսկոպների պահեստավորման և տեղափոխման քայլերին: Ընկերությունը ցանկանում է համագործակցել բժշկական և հիվանդանոցային ոլորտի ներկայացուցիչների հետ տարածման ծառայությունների մտուցման պայմանագրի շրջանակներում:

Ծածկագիր. BOIT20170623005

Ռուսական արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է առաձգական հեղուկացված շերտով մերսման համակարգերի արտադրության մեջ, ինչպիսիք են՝ մերսման աթոռներ, մերսման սեղաններ, բազմաֆունկցիոնալ շարժական մերսման սարքեր և ոտքի համար նախատեսված մերսման սարք, ցանկանում է համագործակցել տարածման և առևտրային գործակալական ծառայությունների մատուցման շրջանակներում:

Ծածկագիր. BORU20160816007

Իսրայելական ընկերությունը ցանկանում է հիմնել իր ներկայացուցչությունը

արտասահմանում

Իսրայելական ընկերությունը մասնագիտացած է վտանգավոր զագերից և թունաքիմիկատներից մշակը պաշտպանելու լուծումների մշակմամբ: Ընթացիկ մրցունակ արտադրանքի առավելությունները ներառում են պաշտպանության երկար ժամանակը, պաշտպանության բարձր արդյունավետությունը, հիպոալերգենային բնույթը, բոլոր տարիքի համար պիտանիությունը և այլն: Ընկերությունը ցանկանում է համագործակցել դիստրիբյուտորական և առևտրային գործակալի ծառայությունների մատուցման շրջանակում:

Ծածկագիր. BOIL20170326002

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը փնտրում է նորարարական բժշկական և վիրբուժական արտադրանք

Մեծ Բրիտանիայում երկար ժամանակ գործող և վստահություն վայելող մատակարարը, որը մասնագիտացած է բարձրորակ, էներգաարդյունավետ վիրբուժական, անեսթեզիայի և օդուղիների միասնական օգտագործման լուծումների նախագծման, մշակման և արտադրության մեջ, փնտրում է նոր և նորարարական արտադրանք իր ներկայիս պորտֆոլիոն ընդլայնելու համար:

Ծածկագիր. BRUK20160401001



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը, որը ներկայումս հանդիսանում է ամենաորակյալ սպորտային արտադրանքների (պղպջակների) դիստրիբյուտորը Լեհաստանում և տեղեկացված է սպորտային վերջին նորություններով, ցանկանում է արտահանել իր ապրանքն այլ երկրներ: Նրանք հետաքրքրված են տարածման ծառայությունների պայմանագրի կնքմամբ հնարավոր առաքման մոդելի հիման վրա:

Ծածկագիր. BOPL20160920003

Իսպանական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Իսպանական ընկերությունը, որը մասնագիտացած է տարբեր ոլորտների համար (ավտոմոբիլային, գյուղատնտեսական, տեքստիլ և այլն) փայտի պահպանման բազմատեսակ լուծումների մշակմամբ, փնտրում է գործընկերներ Եվրոպայում և դրա սահմաններից դուրս տարածման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BOES20160615002

Չեխական նորաձևության գործակալությունը փնտրում է գործընկերներ

Չեխական փոքրիկ նորաձևության գործակալությունը ներկայացնում է տաղանդավոր չեխ դիզայներների աշխատանքները իր առցանց հարթակում և ընդհանուր առմամբ առևտրային շուկայում: Գործակալությունը ցանկանում է համագործակցել այլ ընկերությունների հետ՝ մասնավորապես մշակութի և նորաձևության ոլորտից, որոնք հետաքրքրված կլինեն համագործակցել ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակում:

Ծածկագիր. BOCZ20161202001

Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական արտադրողը փնտրում է հունքի մատակարարներ

Լեհական ընկերությունը մասնագիտացած է կոմպոզիտային նյութերից պատրաստված տարբեր արտադրատեսակների մշակման և արտադրության մեջ, նախատեսված մասնավորապես ավտոմոբիլային արդյունաբերության համար: Նրանք փնտրում են պատրաստի և կիսաֆաբրիկատ կոմպոզիտային նյութերի նոր մատակարարներ, որոնք թույլ կտան կայունացնել արտադրությունը և մշակել նոր արտադրանք: Ներկայումս նրանք օգտագործում են խցանման առանցքի և ածխածնի, արամիդի և ապակե մանրաթելերի կոմպոզիտներ՝ որպես ամրացում, սակայն բաց են նաև այլ նյութերի համար: Ակնկալվում է կնքել արտադրական պայմանագիր:

Ծածկագիր. BRPL20171016001

Հոլանդական ընկերությունը փնտրում է արտադրողներ և առաջարկում է իր ծառայությունները որպես դիստրիբյուտոր և գործակալ

Հոլանդական ընկերությունը մասնագիտացած է հոլանդական շուկայում խանութների ինտերիերների նախագծման և մեծածախ վաճառքում: Ընկերությունը ցանկանում է հարստացնել իր արտադրանքի պորտֆելը և փնտրում է խանութների ինտերիերների և բաղադրիչների արտադրողներ, որոնք հետաքրքրված կլինեն հոլանդական շուկայում իրենց արտադրանքը վաճառելուն: Ակնկալվում է համագործակցել առևտրային կամ տարածման ծառայությունների մատուցման շրջանակում:


Ծածկագիր. BRNL20170821001

Բարձրորակ խաղալիքներ և խաղեր բաշխման նպատակով

Լեհական ընկերությունը հանդիսանում է հայտնի արտահանող, ինչպես նաև խաղալիքների ու խաղերի ներմուծող: Ընկերությունը, ի թիվս այլոց, համագործակցում է մեծածախ վաճառք իրականացնողների, խանութի ցանցերի, մանրածախ շղթաների, սուպեր և հիպերմարկետների, ավանդական խաղալիքների խանութների և էլեկտրոնային խանութների հետ: Ներկայումս նրանք փնտրում են խաղալիքների մատակարարներ ամբողջ աշխարհում, իրենց ապրանքային առաջարկը ընդլայնելու համար: Այդ նպատակով նրանք ցանկանում են կնքել տարածման ծառայությունների մատուցման պայմանագիր:

Ծածկագիր. BRPL20160411002

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Ծրագրային ապահովում միկրո և փոքր ընկերությունների համար

Իտալական ընկերությունը, որը ունի փորձ միկրո և փոքր ընկերությունների համար նորարարական ծրագրային ապահովման ոլորտում, մշակել է ճկուն ծրագրային ապահովման համակարգ ուղղված սննդի արդյունաբերությամբ և գյուղմթերքի ոլորտով զբաղվող միկրո և փոքր ընկերությունների համար: Իտալական ընկերությունը ցանկանում է գտնել ընկերություններ, ասոցիացիաներ, որոնք հետաքրքրված կլինեն տեխնիկական աջակցության հետ կապված առևտրային պայմանագրերի գծով հարմարեցված համակարգում (սեփական կարիքների հարմարեցում) կամ տեխնիկական համագործակցության մեջ:

Ծածկագիր. TOIT20170915001

Ֆրանսիական ՓՄՁ-ն, որը հանդիսանում է փորձագետ ճշգրիտ եղանակային կանխատեսումների գործում, առաջարկում է լայն տարածում ունեցող և ժամանակավոր բանաձևեր ամբողջ էվրոպայում

Ֆրանսիական ՓՄՁ-ն, որը հանդիսանում է փորձագետ ճշգրիտ եղանակային կանխատեսումների գործում, առաջարկում է տեխնիկական աջակցություն օդերևութաբանական նախագծի բոլոր ասպեկտների համար: Միացնելով և վերամշակելով բազմաբնույթ աղբյուրի տվյալներ և տեխնոլոգիաներ, ներառյալ X- ռադիոտեղորոշիչը, ՓՄՁ-ն սրամադրում է բարձր տարածական և ժամանակավոր լուծումներով մանրամասն տեղեկատվություն: Որոշվում են գործընկերներ նախագիծը կիրառելու գյուղատնտեսական կամ արդյունաբերական օբյեկտների կառավարման մեջ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ծառայությունների մատուցման կամ տեխնիկական համագործակցության շրջանակներում:

Ծածկագիր. TOFR20170927001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Ֆինանսական լուծումների առաջատար հոլանդական ընկերությունը փնտրում է ՓՄՁ-ներ, ովքեր ունեն մեծ արժեք ունեցող չվճարված հաշիվների համար առաջարկվող լուծումներ

Առաջատար հոլանդական ՓՄՁ-ն մասնագիտացված է առևտրի, էլեկտրոնային առևտրի, հեռահաղորդակցության և բանկային ոլորտների ֆինանսական լուծումների ապահովմամբ: Նրանք առաջարկում են վճարել առաքումից և պարտքերի հավաքագրումից հետո: Այս պահի դրությամբ ընկերությունը փնտրում է լուծում, ինչը կարող է նվազեցնել սպառողական գնումների բարձր արժեք ունեցող չվճարված հաշիվների քանակը: Ընկերությունը մտադիր է որդեգրել նոր լուծման համակարգ՝ ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում և պատրաստ է մշակել այս լուծումը տեխնիկական համագործակցության պայմանագրի շրջանակում:

Ծածկագիր. TRNL20170915001

Նորարարական պարարտանյութեր և բուսական խթանիչներ

Իսրայելական քիմիական ընկերությունը փնտրում է նորարարական պարարտանյութեր և բուսական խթանիչներ, ինչպես նաև հարակից տեխնոլոգիաներ բերքատվության բարձրացման և մշակաբույսերի որակի բարձրացման համար: Ընտրված տեխնոլոգիաները, որոնք կհամապատասխանեն ընկերության հիմնական չափանիշներին կստանան ֆինանսավորում անհրաժեշտության դեպքում: Առաջարկվում է համագործակցել հետազոտական, լիցենզիայի կամ համատեղ ձեռնարկության հիմնելու շրջանակներում:

Ծածկագիր. TRIL20170918002

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Նոյեմբեր

24/11/2017	<p>Green Technology Solutions for the Building Sector (Վիեննա Ավստրիա)</p> <p>Տեղեկատվական և ցանցային այս միջոցառումը նվիրված է կայուն և էներգաարդյունավետ բարձր ստանդարտի շենքերի կառուցմանը: Միջոցառման մուտքը անվճար է: Միջոցառման նպատակն է ներգրավել շինարարության և ճարտարապետության ոլորտում գործող հնարավոր բիզնես և հետազոտական գործընկերներին կանաչ տեխնոլոգիաների կառուցման գործում:</p>
30/11/2017-01/12/2017	<p>Artificial intelligence: opportunities for tourism brokerage event (Պալմա Դե Մայորկա, Իսպանիա)</p> <p>Այս գործարար համագործակցության միջոցառումը մտադիր է ստեղծել մասնագիտական հարաբերություններ զբոսաշրջության և նորարարական ոլորտի շահագրգիռ կողմերի միջև (ընկերություններ, պետական կառավարման կառույցներ և այլն):</p>

Դեկտեմբեր

07/12/2017	<p>Brokerage event at Moldova Eco-Energetica (Քիշին, Մոլդովա)</p> <p>Մոլդովա Էկո-Էներգետիկա ամենամյա միջոցառում է, որը նպատակ ունի խթանել վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների զարգացումը և արդյունավետությունը, բարձրացնել գիտելիքների փոխանակման և նոր գաղափարների ու նախագծերի ցուցադրման միջոցով:</p>
------------	---

Տեղական նորություններ և միջոցառումներ

19/10/2017	<p>Գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ</p> <p>Ս. Թ. հոկտեմբերի 19-ին և 20-ին Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան ծրագրի շրջանակներում կայացավ իսպանական 4 ընկերությունների գործարար այցելություն Հայաստան:</p> <p>Միջոցառման կազմակերպիչ էր հանդիսանում Իսպանիայի Տեռասասայի առևտրա-արդյունաբերական պալատը: Այցելության շրջանակներում կայացան գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ հայկական 16 և իսպանական 4 ընկերությունների միջև: Իսպանական ընկերությունները ներկայացնում էին հետևյալ ոլորտները՝ ավիոհովի, կոսմետիկայի, հյուրանոցային արքեսուարների արտադրություն, ինչպես նաև դեղորայքի, մասնավորապես՝ սննդային հավելումների արտադրություն:</p>
------------	--

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են: